

## ՆՎԻՐՎՈՒՄ ՀԱՅՈՑ ՍԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՉԱՏԱԿԻՆ

**ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու**

### ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՐ ԾԱՐՄԵՏԱՆԸ

XIX դարի 90-ական թվականներին Արդուլ Համիդ II-ի սանձազերծած հայկական կոտորածներն իրենց ծավալով և ստուգայի դաժանությամբ աննախադեպ էին նույնիսկ Օսմանյան կայսրության պատմության քառուղիներում, որի «գրեթե բոլոր էջերը», համաձայն ֆրանսիացի Աշանվոր քաղաքական գործիչ, սոցիալիստ Ֆրանսիս դը Պրեսանսի դիպուկ բնորոշման, «աղտոտված են արյունով»<sup>1</sup>: Հայկանաբար որևէ երկրում համիդյան ցեղասպանության այս փուլը, որին զոյն գնացին շուրջ 300.000 արևմտահայեր, այնպիսի լայն արձագանք չի գտել, ինչպես Ֆրանսիայում, որ բողոքի իրենց ձայնն են բարձրացրել քաղաքական տարրեր դիրքորոշում ունեցող ամենանշանավոր գործիչները (Ժան Ժորե, Ժորժ Կլեմանտու<sup>2</sup>, Դեզի Կոշեն, Ֆրանսիս դը Պրեսանս), գրողները (Անատոլ Ֆրանս) և պատմաբանները (Ալբեր Վանդալ<sup>3</sup>, Էդուարդ Դրիխ, Անատոլ Լերուա-Բոլիո), կազմակերպվել են հրապարակային դասախոսություններ, լուս են ընծայվել փաստաթղթերի ժողովածուներ, ֆրանսիացի ականատեսների հուշեր, գրքեր, հոդվածներ:

Ի պաշտպանություն հայ ժողովրդի իրենց ձայնն են բարձրացրել նաև ֆրանսիայի կրոնական գործիչները, որոնց դրոշակակիրն առաքելական միսիոներ, Արևելյան դպրոցների բարեգործական ընկերության տնօրեն, Վատիկանի հանձնառարությամբ եվրոպական տարրեր երկրներում բազմից դիվանագիտական առաքելություններ ի կատար ածած հայր Ֆելիքս Շարմետան (1844-1921) է: Վերջինս 1890-ական թթ. լայնածավալ աշխատանք է հրականացրել ոչ միայն արևմտահայության եղեռնի հավասար պատկերը ֆրանսիական հասարակայնությանը ներկայացնելու<sup>4</sup>, այլև հանգանակությունների միջոցով արևմտահայերին նյութապես

<sup>1</sup> Pour l'Arménie et la Macédoine. Préface de V. Bérard. Introduction de P. Quillard. Rapport de Francis de Pressensé, Paris, 1904, p. 21-22.

<sup>2</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Համիդյան կոտորածները և Ժորժ Կլեմանտու // «Ազգ», 24. 4. 2002:

<sup>3</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Ներածություն // Ալբեր Վանդալ, Հայերը և բարենարողությունները Թուրքիայում, Երևան, 2001:

<sup>4</sup> Տե՛ս Պ[էր] Ֆ[ելիք] Շարմետ, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d.; *idem*: L'Arménie agonissante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'État. Paris, s. d.; *idem*: Le Livre jaune et la question d'Orient // Revue diplomatique et coloniale (Paris), 1897, N 1, du 1<sup>er</sup> mars.

օժանդակելու ասպարեզում:

Հայ դատի բոցաշունչ պաշտպանը Բամիդյան ջարդերը ճշավակող՝ Փարիզի Լյուիսներության ակումբում 1896 թ. մայիսի 18-ին ունեցած իր առաջին խկ ելույթում ցեղասպանության մեկնաբառման հարցում գրավել է միանգամայն հստակ դիրքորոշում այն դիտելով իբրև բացառապես կրոնական հողի վրա խարսխված եղելություն: «Մի ամբողջ ժողովուրդ իր հավատի պատճառով,- գրում է նա,- մահմեդական մոլեռանդության կողմից դատապարտված է բնաջնջման և մահվան»<sup>5</sup>: Ինչ վերաբերում է հրաշքով փրկվածների կրած «ապասինների մանրամասներին», ապա դրանք, ըստ նրա, գործադրվել են, որպեսզի հայերին «հարկադրեն ուրանալու իրենց հավատը»<sup>6</sup>:

Սրտի ամրում կախիծով է հայր Շարմետանն արձագանքում յաթադանից փըրկված հայերի անելանելի կացությանը. «Ի՞նչ արհավիրք, ի՞նչ թշվառություն կարող է համեմատվել հազարավոր քրիստոնյաների արհավիրքների և թշվառությունների հետ, որոնցից խլել են ամեն ինչ, որոնց տները կողովտել են ու հրկիզել և որոնք մնում են անապատան, առանց հագուստի, առանց մժերային պաշարների, որոնք դատապարտված են կամ ուրացողության, կամ սովամահության՝ եթե մենք նրանց շուտափություն օգնության չհասնենք»<sup>7</sup>:

Ողբերգական իրադարձությունների ծավալմանը զուգընթաց, ընդլայնվել են նաև հայր Շարմետանի հայամպաստ գործունեության շառավիղները, և ֆրանսիացի հոգևորական ամվարանորեն ձեռնամուխ է եղել հայկական կոտորածների վրա լուս սփռող արժանահավատ փաստաթղթերի հրապարակմանը: Հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս խիստ էական հանգամանքի վրա, քանզի նա առաջիններից էր, ովքեր մինչ այդ՝ հայերի ցեղասպանության մասին աղոտ պատկերացում ունեցող ֆրանսիական հասարակայնության սեփականությունը դարձրին Օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունների անսրող պատկերն արտացոլող վավերագրերի՝ գուցեն փոքրածավալ, սակայն արժեքավոր ժողովածուներ, որոնց օգնությամբ հնարավոր դարձավ թեև մասամբ, այդուհանդերձ ստույգ պատկերացում կազմել կոտորածների ընթացքի և ծավալի մասին:

Հայր Շարմետանի կողմից, հավանաբար 1896 թ., լուս ընծայված շատ կարևոր՝ «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն ամփոփում է ֆրանսիական և հայկական ծագում ունեցող մի շարք արժանահավատ փաստաթղթեր, որոնք ուղեկցվում են նրա սեղմ, բայց ընդգրկում մեկնաբառություններով: Այդ փաստաթղթերի թվում առանձնանում է «Հայատանի կոտորածների պաշտոնական աղյուսակը», որն առաջին անգամ հրապարակվել է նրա նա-

<sup>5</sup> Conférences sur les massacres d'Arménie // La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmène, Paris, 1986, p. 91. Տե՛ս նաև R[évérend] P[ère] F[elix] Charmetant, Livre d'or des martyrs de la Charité. Hommage aux victimes de la catastrophe du 4 mai 1897, Paris, 1897, p. VIII, IX:

<sup>6</sup> Conférences sur les massacres d'Arménie, p. 91-92.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 93:

խաճեռությամբ (ավելի ուշ այն գետեղվել է նաև Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերն ընդգրկող «Դեղին գրքում»):<sup>8</sup>

Հայր Շարմետանի շամքերի շնորհիկ հրապարակված այս փաստաթուղթն առաջին անգամ, շատ էլույան, արժեքավորել է Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար Բերտեղովին ուղղված՝ 1896 թ. հունվարի 25-ի թվակիր նամակում. «Այս աշխատանքն իրականացվել է վեց դեպամենտի կողմից՝ համաձայն այն զեկուցագրերի, որոնք նրանց են հղել իրենց համապատասխան հյուպատոսները: Այդ զեկուցագրերը քննարկվել են համատեղ ծնուզ և համեմատվել, որոնց համադրությունից ծնունդ է առել այս այդուսակը»: Կամբոնն, ի դեպ, աղյուսակում ամփոփված տեղեկություններն ամենակին սպառիչ չի համարում, քանզի, համաձայն նրա հավաստման, «փոստն այդ իրադարձությունների մասին ամեն օր հաղորդում է նորանոր մանրամասներ»:<sup>9</sup>

Ամեն իեպքում, խոսքը վերաբերում է մեծ հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթի, որն ամենայն մանրամասնությամբ արտացոլում է 1895 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Օսմանյան կայսրության տասնմեկ վիլայեթներում ծավալված իրադարձությունները: Այդուսակը բաղկացած է հինգ պյունակից, որոնք համապատասխանաբար տեղեկություններ են հայորդում կոտորածների տեղավայրերի, ամսաթվերի, գոթերի քանակի, տեղի ունեցած անցքերի և դրանց դրամապատճառների, իշխանությունների ունեցած դիրքորոշման մասին: Փաստաթղթում բազմից հատակորեն մատնանշվում է հայերի ցեղասպանությանն իշխանությունների ունեցած մեղակցությունը, որոնց թողտվությամբ, իսկ հաճախ՝ կարգադրությամբ տեղի են ունեցել կոտորածները, ինչպես նաև ընդգծում գորքերի մասնակցությունը շարդեղին ու կողոպուտին:<sup>10</sup>

Հայր Շարմետանի գնահատելով «այս պաշտոնական փաստաթուղթն իրեն բացարձակապես արժանահավատ, որն առանց չափազանցությունների և սին արտահայտությունների, թվերի ու փաստերի անողոքությամբ իրագեկ է դարձնում Հայաստանի կոտորածների իսկությանը, որոնք չափերով և սարսափելի մանրամասներով մեծապես գերազանցում են՝ առաջին տեղեկությունների շնորհիկ մեզ հանար բացահայտված պատկերը», դրա լույս ընծայումը համարում է իր «մարդասիրական և հայրենասիրական պարտքը»:<sup>11</sup>

Այդուսակի տեղեկությունները չհամարելով ամենակին ամբողջական և վերջնական, հայր Շարմետանն այնուամենայնիվ, դրա վերլուծությունից հանգում է միակ հնարավոր հետևողայնը, պնդելով, որ խոսքը վերաբերում է «իսկական մարտիրոսության»: Արժանահավատ թվերի միջոցով այն (այդուսակը - Վ. Պ.) օր առ օր, ամիս առ ամիս, հավաստում է, որ գոթերի՝ միայն հիմնական բնակավայրերում

<sup>8</sup> *St'ret Documents diplomatiques. Affaires arménienes. Projets de réformes dans l'Empire ottoman 1893-1897*, Paris, 1897, p. 199-211:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 198:

<sup>10</sup> P[ère] F[élix] Charnetant, *Martyrologe arménien*, p. 10-40.

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 3:

ճշգրտված թիվը հասնում է գրեթե երեսուն հազար կոտորված քրիստոնյայի, եթե նոյնակ մի կողմ բողնենք այն մարդկանց շատ ավելի ահուելի թիվը, ովքեր մորթվել են հյուպատոսների տեսադաշտից դուրս, քրիստոնյաների՝ այսօր ավերված հազարավոր զյուղերում<sup>12</sup> (ընդգծումը ჩեղինակին է - Վ. Պ.):

Ժողովածուում տեղ են գտել նաև հինգ այլ փաստաթղթեր, որոնցից ամենահետաքրքիրն ականատեսների վկայությունների հիման վրա՝ գրիգորյան եպիսկոպոսության անդամներից մեկի կազմած «Համառոտ վիճակագրությունն» է: Այստեղ արդեն մանրամասնորեն նկարագրվում են ոչ միայն կայսրության տասնեւեկ վիլայեթների զյուղերում տեղի ունեցած վայրագրությունները, կանանց (այդ թվում հիջ) նկատմամբ գործադրված սուկալի բռնությունները, այլև քահանաների սպանությունները, եկեղեցիների և վաճերերի պահումն ու կողոպտումը<sup>13</sup>:

«Հայկական նահատակություն» ժողովածուից զատ, հայր Շարմետանը, հավանաբար 1897 թ., առանձին գրքով կով լուս է ընծայել և մեկ արժեքավոր փաստաթուղթ: Խոսքը վերաբերում է արևմտահայերի՝ «Ռուսական տարածքում գտնվող Արարատի և Կովկասի մեր հայ ներայիններին» հիած՝ 1896 թ. դեկտեմբերի 15-ի թվակիր դիմումին: Դրան նա կցել է՝ «Բեղինի պայմանագիրը ստորագրած վեց մեծ տերությունների պետական ղեկավարներին, վարչապետներին, դեսպաններին և նախարարներին» ուղղված իր կոչը, որով նորանց հորդորում է փրկել «ամենքի կողմից լրված այս ժողովրդին, որը ներկայումս բնաշնչվում է ոչ թե մեծ հեկասումբերում (զանգվածային սպանության վայրերում), այլ կրեով՝ պատմության մեջ երևէ շարձանագրված ամենասուկալի և ամենասարասարելի տառապանքները»<sup>14</sup>:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի բնակիչների մասին պատմող փաստաթղթին, ապա դրանում մանրամասնորեն շարադրված են զանգվածային կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում հայ բնակչության հանդեպ դրսերվող նոր վերաբերմունքի առանձնահատկությունները՝ անողոր հալածանքները, մասնավոր սպանությունները, տնտեսական կեղեցումը, բռնի կրոնափոխության պարտադրումը և այլն, որոնք հետապնդում են «հայ ազգության դանդաղ, սակայն հավաստի բնաշնչման» նպատակը<sup>15</sup>:

Տարբեր առիթներով թուրքերին համեմատելով ամենավայրագ բարբարությունի հետ, ինչպիսիք են Զինգիզ խանը, վանդալները, հոները, հայր Շարմետան մատնանշում է այն էական զանգվածությունները, որոնք առկա են վերջիններին և թուրքերի վարքագծի միջև: Համաձայն նրա՝ եթե նախորդ դարաշրջաններում մարդկային հասարակության պատմության խաչմերուկներում քրիստոնյա ժողովուրդների հետ ունեցած շփումների ընթացքում իրենց արյունոտ հետքը թողած բարբարությունի հանցանքները պարբերական բռնվածք չեն կրել, ապա թուրքերը «դարեր ի վեր մնացել են տարբեր քրիստոնյա ազգությունների ազար և վայրենի բռնա-

<sup>12</sup> Նոյն տնդում, էջ 4:

<sup>13</sup> Նոյն տնդում, էջ 46-70:

<sup>14</sup> Père Félix Charnetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 1-2.

<sup>15</sup> Նոյն տնդում, էջ 11:

կալները», որոնց կողմից քրիստոնյաների Ակատոմամբ կիրավում են այնպիսի «կատաղի հալածանքներ, որոնք ավելի սարսափելի են, քան Դոմետիանոսի և Ներոնի հալածանքները»<sup>16</sup>:

Վերը նշված փաստթղթերի մեջ հիմնարար ծանրությունը հայր Օարմետացին հնարավորություն է ընձեռնել իրադարձությունների զարգացմանը համընթաց՝ ամբողջությամբ ընկալելու թուրքերի կողմից հայերի Ակատոմամբ կիրավող քաղաքականության ոլորտում ի հայու ենկած փոփոխությունների իմաստը. «Թվում է, թե թուրքերն այսօր ցանկանում են հետևել այլ տակտիկայի: Իրենց կայսրության քրիստոնյաներին բնաշնչելու համար, նրանք այլևս նրանց չեն կոտորում զանգվածաբար, այլ աշխատում են ամայացված նահանգներում քարոյացել քրիստոնյա կնոջը, որին, կոտորածների պահին, ավելի հաճախ խնայել են և ուրացության դրդել հայկական ընտանիքներին ու համատարած զյուղերի»<sup>17</sup>:

Գործեակելեցի այդ փոփոխությանը, մեկ այլ առիթով, նա տպիս է հետևյալ սպառիչ մեկնաբանությունը. «Թուրքերը հասկացել են, որ այս սպառություններից Եվրոպան վերջապես սկսել է հոգվել, և քանի որ նրանք այժմ երկրություն են զինված միջամտությունից՝ փոխել են տակտիկան: Մեկ տարրոց ի վեր, հատկապես ամենաԲեռավոր նահանգներում, նրանք ամենաահարկու և ամենաանողոր հալածանքների միջոցով որդեգրել են հայ ազգությանը տանջամարությամբ նահատակելու, քողարկված ձևով բնաշնչելու մեթոդները, որին երդվել են անհետացնել դանդաղորեն, սակայն անվարանորեն, դիմուվ սակայն անհրաժեշտ զգուշությունների, որպեսզի Եվրոպային մեծ հուզմունք չպատճառեն»<sup>18</sup>:

Նշված ժողովածուներում հրապարակված փաստթղթերին հայր Օարմետանի տվյալ մեկնաբանությունները վկայում են Օսմանյան կայսրությունում 1890-ական թվականներին ծավալված ողբերգական իրադարձությունների վերլուծության հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխությունների մասին: Եթե առաջին եղություն նա հայերի կոտորածները պայմանավորում էր բացառապես կրոնական ակունքներից բխող՝ մահմետական մոլեռանդ բնակչության գործողություններով, ապա այժմ, վերստին մատնացուց անելով «կրոնական մոլեռանդության» և «քրիստոնյա ժողովորդի դևմ մահմետականների կողմից ցուցաբերված մոլեզնության» համագամանքը, պարբերաբար ընդգծում է շարդերի իրականացման հարցում օւմանյան իշխանությունների դերը, եղեռնի «կանխամտածված և նախապատրաստված բնույթը»<sup>19</sup>:

«Մի ամբողջ քրիստոնյա ժողովուրդ,- գրում է նա, - կարճ ժամանակամիջոցում, մահմետական միապետի կողմից, որին իր ոճիրները մարդկային հասարակությունից դրւում են դմելու, համիդավի դատապարտված է անհետացման»<sup>20</sup>: Մեկ այլ ա-

<sup>16</sup> P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien, p. 41, 42.

<sup>17</sup> Նոյն տնիում, էջ 42:

<sup>18</sup> P[ère] F[élix] Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 4.

<sup>19</sup> P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien, p. 41.

<sup>20</sup> P[ère] F[élix] Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 1.

ոդիթով անդրադառնալով կայսրության տասնմեկ համանգներում թուրքական իշխանության Անդրկայացուցիչների՝ հայկական կոտորածների հարցում ունեցած մեղսակցությանը, նա մատնանշում է, որ հենց վերջիններու են «քույլատրել քրիստոնյա բնակչության կոտորածը, եթե դրանք նրանց իսկ կողմից չեն կազմակերպվել»<sup>21</sup>:

Թեև հայր Շարմետանի հայացքների համակարգում կրոնական գործոնի վճռորոշ մշամակությունը շարունակում է պահպանել գերիշխող դիրքեղի, այդուհանելիք ակնհայտ է, որ նորանոր փաստաթղթերի հետ ծանոթությանը զուգընթաց՝ նրա ուշադրությունը հավասարապես սևեռվել է նաև կոտորածների հարցում օսմանյան իշխանությունների ունեցած դեկավար դերի վրա: Կրկին անդրադառնալով թուրքերի գործեղակերպի փոփոխությանը, օրինակ, նա գրում է. «Այստեղ ևս, թվում է, թե գոյություն ունի մի ծրագիր, որին իշխանությունները հետևում են համաշափորեն՝ թե՛ քրիստոնյա կանանց բարոյալքելու, թե՛ հայերին հարկադրաբար իւլամն ընդունել տալու համար»<sup>22</sup>: Ըստ համար, 1895-1896 թթ. «սարսափելի հեկատոմերն, ըստ նրա, երևան են եկել «համաձայն տրված հրամանի և ազդանշամի»<sup>23</sup>:

Այսպես, եզրափակելով իր մտորումները, նա եզրակացնում է. «Թուրքիայում ունեցած իր մերկայացուցիչների միջոցով նա [Եվլոպան - Վ. Պ.] տեղեկացել է այս սարսափելի ողբերգության բոլոր մանրամասներին: Նա իրազեկ է դարձել, որ երեք ամսվա ընթացքում քրիստոնյաների իսկական հեկատոմերն ի հայտ են եկել ոչ թե անցողիկ, ծայրամեջ գրդվածության հետևանքով, այլ հստակ կազմակերպված ծրագրի հիման վրա, որը նախապատրաստվել է խնամքով և կենսագործվել սառնասրտորեն»<sup>24</sup>: Ուստի, նա հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ այս ոճագործության համար «սովորանին ուղղակիորեն պատասխանառու նամաշելու» անհրաժեշտությանը<sup>25</sup>:

1897 թ. լուս ընծայված «Դեղին գրքում» ամփոփված դիվանագիտական գրագրությունների ընթերցումը մեծապես նպաստել է հայր Շարմետանի հայացքների հետագա էվոլյուցիային, որն այդուհետև համիդյան կոտորածներին տվել է ավելի սպառիչ, քան մինչ այդ, մեկնաբանություններ՝ դրանք դիտելով իբրև «մի ողջ ազգության կանանմատածված, անողոք և դիտավորյալ բնաշնչում, որը մոլեռանդ մահմեղականների միջոցով իրականացվել է թուրքական իշխանությունների, կանոնավոր բանակի և կառավարության գործակալների կողմից, որոնք թվում են, թե պարտադիր էին շատ ավելի արյունաբրու՝ քան Զինջիկ խանները և Լեռն Թնամուրները միավետի՝ վաղուց ի վեր նախապատրաստած ծրագրի համաշափ կենսագործումը»<sup>26</sup>:

<sup>21</sup> P[ère] F[élix]x Charmetant, Martyrologe arménien, p. 96.

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 42:

<sup>23</sup> Père F[élix]x Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 4.

<sup>24</sup> P[ère] F[élix]x Charmetant, Martyrologe arménien, p. 95-96.

<sup>25</sup> Նոյն տեղում, էջ 96:

<sup>26</sup> F[élix]x Charmetant, Le Livre jaune et la question d'Orient, p. 3.

Այնուամենայնիվ ամբողջեցու է ընդգծել, որ չնայած մեզ հետաքրքրող հարցում հայր Օսրմետանի ըմբռնումների ընդայնմանը, իրադարձությունների Ակատմամբ շատ ավելի ընդգրկուն մոտեցման դրսևորմանը, նա այդուհանդերձ, ամբողջությամբ չի ըմբռնել օսմանյան կառավարության հայացինց քաղաքականության բուն իմաստը, որը հանգում էր արևմտահայության բնաշնչման միջոցով բռնագրավված հայկական պատմական տարածքների հայաթափմանն «ավելորդ» և «անհանգրատություններ պատճառող» ժողովոյից:

Հարկ ենք համարում հայր Օսրմետանի հայացքների համակարգում առանձնացնել նաև ուշադրության արժանի մեկ այլ առանձքային՝ Եվրոպական մեծ տերությունների և մասնավորապես Ֆրանսիայի ղեկավար շրջանների քաղաքականության խարազանման հանգամանքը, որոնց կողմից, ինչպես նա նշում է, և ոչ մի «պաշտոնական խոսք չի ասվել ի հայաստ զոհերի»: «Իբրև մարդ, իբրև ֆրանսիացի և իբրև քահանա, հայտարարել է նա դեռևս իր առաջին ելույթում, - ես որա համար զգում եմ եռակի ամոր»<sup>27</sup>:

Մանրամասն վերլուծելով համիլյան կոտորածների ընթացքում արևմտահայության հանդեմ Եվրոպական պետությունների գրաված ամելարեկից և ամստարեղ վարքագիծը, հայր Օսրմետանը չի վարանել զանազան առիթներով խստագույն դատապարտելու նրանց պարավելի դիրքորոշումը: Ցեղասպանության «քուն մեղավորը», նրա կարծիքով, Եվրոպան է<sup>28</sup>, այն «քրիստոնյա Եվրոպան, որը մեղավոր է, քանզի թույլատրել է այս ամրակու նեկատումքների երևան գալը Հայաստանում, որտեղ 300.000 քրիստոնյաներ հենց նոր մորթվել են, կենդանի այրվել ու սպանվել ամենասարսափելի խոշտանգումների պայմաններում»<sup>29</sup>: Նա դառնությամբ է արձանագրում, որ երեք տարի շարունակ, հայերի բնաշնչման ծրագրի կենսագործման ժամանակ, «Բեղլինի պայմանագրի մերքը ստորագրած տերությունները ոչինչ չեն կարողացել անել դրա ընթացք կասեցնելու համար, իսկ նրանց անզոր դիվաճագիտությունը որևէ խոչընդոտ չի հարուցել, քանզի նրա միջամտությունը վերածվել է պարզունակ ներկայացուցչությունների, բանակցությունների կամ սպառնալիքների, որոնք Թուրքիան չի բարեհանել առյանիսկ լրջորեն ընդունելու»<sup>30</sup>:

Հայր Օսրմետանի ուշադրությունից չեն վկիպել նաև թուրքական դիվաճագիտության խորամանկ մեքենայությունները: Ինչ վերաբերում է «թուրքին», ապա վերջինս դիվաճագիտության ասպարեզում և ոչ մեկից չի երկրուդում. «Նա ամենաբարձր մակարդակով է տիրապետում խուսափողական պատասխաններ տալու, հարցերի լուծումը հետաձգող բանաձևների մշակման արվեստին. Առ սերենեթելու արվեստի, անպատուի քննարկումների վարպետ է և ոչ մեկն ի վիճակի չէ, ավելի հմտորեն, քան նա, բանակցություններն ապարդյուն դարձնելու և վճիռները հետա-

<sup>27</sup> Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

<sup>28</sup> P[ère] F[élix]x Charmetant, Martyrologe arménien, p. 96.

<sup>29</sup> R[évérend] P[ère] F[élix]x Charmetant, Livre d'or des martyrs de la Charité, p. IX.

<sup>30</sup> F[élix]x Charmetant, Le Livre jaune et la question d'Orient, p. 3.

ձգելու ու իրեն ճնշող գործառնությունները ձախողելու համար անհրաժեշտ ժամանակ շահելու»<sup>31</sup>:

Իբրև ազմի ֆրանսիացի, հայր Շարմետանը խիստ ազդվել է մասնավորապես հայկական ցեղասպանության ի տես` ֆրանսիական կառավարության կողմից պահպանվող լուսաբանությունից: «Դեղին գոքի» ընթերցումից հետո, նա ցավով ընդգծել է. «Հիրավի, մնում ենք ապշած և վլողված, որ ֆրանսիական կառավարությունը կարող էր հման փաստաթղթերը հրատարակելու համար սպասել չորս տարի, որոնց ընթացքում նա Ֆրանսիան, խորհրդարանը, հասարակական կարծիքն անջրպետել է այս դարի ամենանշանակալից, ամենաահարկու և ամենաորեղջգական անցընթից և նրանց պահել ամենակատարյալ անհրագեկության մեջ: Արդյո՞ք մենք ապրում ենք հանրապետական, թե կամայական վարչակարգի օրոք: Թվում է, թե Լյուդովիկոս XIV-ը և Նապոլեոնը կվարանեին, այսչափ երկար ժամանակ, գաղտնի պահել հման կարևորություն ունեցող փաստաթղթերը»<sup>32</sup>:

Հայր Շարմետանն ամողոր է մասնավորապես իր լուսաբանությունը հասարակական կարծիքից թաքցնող ֆրանսիական մամուլի նկատմամբ. «Մեղավորը մասնավորապես մամուլ է: Մենք ցավով տեսանք, հազվադեպ բացառություններից զատ, թե ինչպես է անզամ ամենաքաջարի և ամենամարտնչող լրագրերի մեծամասնությունը մերժում մեր հաղորդումներն ու լուսաբանում»<sup>33</sup>:

Փոխարենը, նա գովեստի խոսքեր է ուղղում Եկեղեցու հասցեին, որը չի զլացել օգնության ձեռք մեկնելու զոթերին և իրեն քաջալերել է նրանց համար հանգանակությունների կազմակերպման միջոցով գումարներ հայթայթելու հարցում<sup>34</sup>, շեշտում է բազմաթիվ եպիսկոպոսների ցուցաբերած աշակեցությունը<sup>35</sup>.

Խիստ հատկանշական է, որ ամենախիստ ձևով դատապարտելով ոչ միայն օսմանյան կառավարության և Արդյուն Համիդի արյունուշտ քաղաքականությունը,

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում, էջ 4:

33 Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

34 Այս հարցի կապակցությամբ, հայր Շարմետանը մեկ այլ առիթով հավաստել է. «Կոտորածների առաջին հակ պահից մենք մեր գրասենյակներում կազմակերպել ենք հասարակական հանգանակություն, որի շնորհիվ հազարավոր հայեր աղոն փրկվել են ամերկրա մասից կամ ուրացողությունից»: Տե՛ս R[évérend]. P[ère] F[élix] Charmetant, Livre d'or des martyrs de la Charité, p. IX: Նշենք նաև, որ թվ՝ 1897 մայիսի 4-ին Փարիզի Գթության շուկայում բռնկված հրդեմի զոթերի հիշատակին պվիրված՝ խմեր առարկա զիրքը, թվ՝ 1896 թ. հրատարակած «Հայկական մարտակությունն խորագիր կրող փաստաթղթերի ժողովածուն, նա վաճառքի է դուրս բերել հօգուտ հայկական կոտորածների զոթերի կազմակերպված հանգանակության:

35 Conférences sur les massacres d'Arménie, p. 92-93. Այս առթիվ արքա Պիգանին ևս, անդադամալով Ֆրանսիայում ձեռնարկված հայանապատ միջոցառումներին, 1896 թ. մայիսին հավաստել է. «Բնարավոր է դարձել ավելի քան 200.000 ֆրանկ ուղարկել՝ հոգալու համար ամենահրատապ կարիք ները. սովոր և ցրտարությունից մարվան դուրս հասած այս դժբախտներին հաց և հազուտ է տրամադրությունը»: Տե՛ս L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896, p. 22:

այլն մեծ տերությունների անկարեկից վարքագիծը, հանդիմանելով Եվրոպային պատասխանատվության իր էական բաժինն ունեցող՝ «մահմեղական բարբարության համագործակցի վերածվելու», «հարյուր հազար հայերի մորթել թուլատրելու» և այդ ողբերգության «հակական մեղավորը» դառնալու հարցուն<sup>36</sup>, առ, ինչպես և իր ժամանակի ֆրանսիացի մտավորականների հոծ մեծամասնությունը (Ալբեր Վանդալ, Անատոլ Լերուա-Բոլիո, Պ. Կովքը և ուրիշներ), հանդես է եկել իրեն Օսմանյան կայսրության ամրողականության պահպանման շատագով՝ ֆրանսիական դիվանագիտության առջև ծառացած խնդիրը սահմանափակելով լոկ Արևմտյան Հայաստանում արմատական բարենրոգումների անցկացմանն ուղղված վրճական քայլերի իրականացմամբ:

Դեռ ավելին. եղնեղով Ֆրանսիայի ուազմաքաղաքական շահերից, ինչպես նաև Եվրոպայում ուժերի հավասարակշռությունն անասսան պահելու դիտավորությամբ՝ հայր Շարմենտանը համոզմումք է հայտնել առ այն, որ թուրքերի կողմից գործադրությունը բռնություններից հայերին սատարելու հետ մեկտեղ Ֆրանսիան պարտավոր է միաժամանակ հանդես գալ թուրքերի հովանավորի դերում դիմակալելով Օսմանյան կայսրության Ակադեմայի Եվրոպական տերությունների ուննագություններին<sup>37</sup>: Նման դիրքորոշումը միանգամայն հասկանալի է, քանզի Օսմանյան կայսրության տրոհումը, որը կարող էր հանգեցնել Եվրոպական տերություններից մեկի դիրքերի շեշտակի ամրապնդմանը Փոքր Ասիայում, ամհարից էր Ֆրանսիայի ավանդական արտաքին քաղաքականությանը:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ հայր Ֆելիքս Շարմենտանը, ինչպես տեսմում ենք, մեծ լուսաւ է Աերդրել համիլյան կոտորածների անկողմնակալ պատկերը ֆրանսիական և Եվրոպական հասարակականությանը Աերկայացնելու ասպարեզում: Նրա թեև համեստ, բայց գործնական շանքերի շնորհիվ կործանումից հիրավի փրկվել են բազմաթիվ արևմտահայեր: Ուստի, ամփոփելով, ցանկանում ենք մեր կատարյալ համաձայնությունը հայտնել Բարոյական գիտությունների ակադեմիայի ամդամ (1887 թ.) Անատոլ Լերուա-Բոլիոյի հետ, որը Ակադեմի ուննաւով հայր Շարմենտանի բազմաբնությունը գործունեության նշանակությունը, իրավամբ նշել է. «Թե՛ այս փաստաթթերը հրապարակելով, թե՛ ասիական բարբարոսության զոհերի օգտին միջնառումներ կազմակերպելով, հայր Շարմենտը, Արևելքի դպրոցների բարեգործական ընկերությունը, մեր միահներներն առհասարակ, կարևոր ծառայություն են մատուցել ոչ միայն Հայաստանի քրիստոնյաներին, այլ Եվրոպային, Ֆրանսիային, քաղաքակրթությանը»<sup>38</sup>:

<sup>36</sup> P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien, p. 96.

<sup>37</sup> F[élix] Charmetant, Le Livre jaune et la question d'Orient, p. 8, 13, 14.

<sup>38</sup> Les Arméniens et la question arménienne. Conférence faite par M[onsieur] Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896, p. 30.